



**ԵՐԻՏԱՍԱՐԴ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՄԱՏՉԵԼԻ ԲՆԱԿԱՐԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՎԱՐԿԵՐ**

Վարկի նպատակը	բնակարանի (բնակելի տան) ձեռքբերում բնակության նպատակով
Վարկի արժույթը	ՀՀ դրամ (AMD)
Վարկի նվազագույն և առավելագույն չափը	<ol style="list-style-type: none"> <li>1'000'000 – 22'500'000 ՀՀ դրամ՝ երկրորդային շուկայից անշարժ գույքի ձեռքբերման վարկերի դեպքում; ձեռքբերվող անշարժ գույքի մինչև 70%)</li> <li>1'000'000 - 27'750'000 ՀՀ դրամ՝ առաջնային շուկայից (կառուցապատողից) անշարժ գույքի ձեռքբերման վարկերի դեպքում; ձեռքբերվող անշարժ գույքի մինչև 80%)</li> </ol>
Վարկի անվանական տարեկան տոկոսադրույքը	<ul style="list-style-type: none"> <li>• 8%, որից 2% -ը սուբսիդավորվում է ՀՀ ֆին. Նախարարության կողմից, ք.Երևանում բնակարանի(բնակելի տան) ձեռքբերման դեպքում</li> <li>• 7%, որից 4%-ը սուբսիդավորվում է ՀՀ ֆին. Նախարարության կողմից, ՀՀ մարզերում բնակարանի (բնակելի տան) ձեռքբերման դեպքում</li> <li>• 7.5 % (առաջնային շուկայից՝ կառուցապատողից անշարժ գույքի ձեռքբերման վարկերի դեպքում, որը չի սուբսիդավորվում)</li> </ul>
Վարկի փաստացի տարեկան տոկոսադրույքը	<ul style="list-style-type: none"> <li>• 8,71-13,6% ք.Երևանում բնակարանի ձեռքբերման դեպքում</li> <li>• 3,2-15,2% ՀՀ մարզերում բնակարանի ձեռքբերման դեպքում</li> </ul>
Վարկի անվանական տոկոսադրույքի տեսակը	Հաստատուն տոկոսադրույք, որը կարող է փոփոխվել (բարձրանալ կամ իջնել) միայն <Բնակարան երիտասարդներին ՎՎԿ> ՓԲԸ կողմից վերանայված չափով, 3 տարին մեկ անգամ
Վարկի մարման ժամկետը	120 - 240 ամիս
Վարկի ապահովվածության միջոցներ	<ul style="list-style-type: none"> <li>• Անշարժ գույք ք.Երևանում, ինչպես նաև Ընկերության կողմից ընդունելի այլ վայրերում</li> <li>• Երաշխավոր (Վարկային կոմիտեի որոշմամբ)</li> </ul>
Վարկ/գրավ առավելագույն հարաբերակցություն	92,5 %

<p>Ձեռքբերվող անշարժ գույքի առավելագույն արժեքը</p>	<p>1. Ձեռքբերման արժեքը՝ ոչ ավելի, քան 25 միլիոն ՀՀ դրամ և միևնույն ժամանակ գնահատված շուկայական արժեքը՝ ոչ ավելի, քան 26 միլիոն ՀՀ դրամը (երկրորդային շուկայից ձեռքբերելու դեպքում)</p> <p>2. Ձեռքբերման արժեքը՝ ոչ ավելի, քան 30 միլիոն ՀՀ դրամ և միևնույն ժամանակ գնահատված շուկայական արժեքը՝ ոչ ավելի, քան 31 միլիոն ՀՀ դրամը (առաջնային շուկայից՝ կառուցապատողից ձեռքբերելու դեպքում)</p> <p>Ձեռքբերվող անշարժ գույքի ձեռքբերման և գնահատված արժեքները համեմատվում են ՀՀ Ազգային Վիճակագրական Ծառայության կողմից հրապարակվող անշարժ գույքի միջին գների հետ (վերջին հրապարակված տվյալների հետ)՝ հաշվի առնելով բնակարանի մակերեսը և գտնվելու վայրը: Մասնավորապես, բնակարանի մակերեսի և տվյալ տարածքի համար մեկ քառակուսիմետրի միջին արժեքի արտադրյալը չպետք է գերազանցի համապատասխանաբար 26 միլիոն և 31 միլիոն ՀՀ դրամը:</p>
<p>Կանխավճար</p>	<p>1. առնվազն 30% ՀՀ Երևան քաղաքում և մարզերում տրամադրվող վարկերի համար (երկրորդային շուկայից անշարժ գույքի ձեռքբերման դեպքում)</p> <p>* տրամադրված վարկերի համար կանխավճարը կարող է կազմել 10%, եթե՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• բացի ձեռքբերվող անշարժ գույքից գրավադրվում է նաև այլ բնակելի անշարժ գույք: Ընդ որում, տրամադրվող վարկի գումարը չի կարող գերազանցել գրավադրված բոլոր անշարժ գույքերի արժեքի 70%-ը, բայց ոչ ավել քան 22'500'000 ՀՀ դրամը՝ անկախ գրավադրված բոլոր անշարժ գույքերի արժեքից, կամ</li> <li>• բացի ձեռքբերվող անշարժ գույքի գրավից, վարկ ստանալու դիմումը ներկայացնելու պահին տրամադրվում է նաև երաշխավորություն ՀՀ խոշոր հարկատուների ցուցակում ընդգրկված 1-300 տեղերը զբաղեցնող ձեռնարկությունների (կազմակերպությունների) կողմից, կամ</li> <li>• առկա է հիփոթեքային պարտավորության ապահովագրություն՝ ձեռքբերվող անշարժ գույքի արժեքի 30 %-ի և վարկառուի կողմից կատարված 10 % (կամ ավել) կանխավճարի տարբերության չափով:</li> </ul> <p>2. առնվազն 20% ՀՀ Երևան քաղաքում և մարզերում տրամադրվող վարկերի համար (առաջնային շուկայից՝ կառուցապատողից անշարժ գույքի ձեռքբերման դեպքում)</p> <p>* տրամադրված վարկերի համար կանխավճարը կարող է կազմել 7,5 %, եթե՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• բացի ձեռքբերվող անշարժ գույքից գրավադրվում է նաև այլ բնակելի անշարժ գույք: Ընդ որում, տրամադրվող վարկի գումարը չի կարող գերազանցել գրավադրված բոլոր անշարժ գույքերի արժեքի 80%-ը, բայց ոչ ավել քան 27'750'000 ՀՀ դրամը՝ անկախ գրավադրված բոլոր անշարժ գույքերի արժեքից, կամ</li> <li>• բացի ձեռքբերվող անշարժ գույքի գրավից, վարկ ստանալու դիմումը ներկայացնելու պահին տրամադրվում է նաև երաշխավորություն ՀՀ խոշոր հարկատուների ցուցակում ընդգրկված 1-300 տեղերը զբաղեցնող ձեռնարկությունների (կազմակերպությունների) կողմից, կամ</li> <li>• առկա է հիփոթեքային պարտավորության ապահովագրություն՝ ձեռքբերվող անշարժ գույքի արժեքի 20 %-ի և վարկառուի կողմից կատարված 7,5 % (կամ ավել) կանխավճարի տարբերության չափով:</li> </ul>
<p>Վարկի մարման եղանակը</p>	<p>Ամսական անուիտետային մարումներ</p>
<p>Վարկի սպասարկման միանվագ վճար</p>	<p>Վարկի գումարի 0,7%-ը, բայց ոչ պակաս 40'000 ՀՀ դրամից</p>
<p>Վարկի ձևակերպման վայրը</p>	<p>Ընկերության գրասենյակ</p>

Վարկի տրամադրման եղանակը	Կանխիկ կամ անկանխիկ
Վարկի կանխիկ տրամադրման համար վճար	Վարկի գումարի 0,3 %-ը
Վարկի վաղաժամկետ մարում	Տույժեր չեն սահմանվում
Ապահովագրություն	<ul style="list-style-type: none"> <li>• ձեռքբերվող անշարժ գույքի ապահովագրություն՝ վարկի գումարի չափով (0,15%-0,18%)</li> <li>• վարկառուի և համավարկառուների(առկայության դեպքում) ապահովագրություն դժբախտ պատահարներից՝ վարկի գումարի չափով (0,15%-0,18%)</li> <li>• չվճարված կանխավճարի ապահովագրություն(1,8%-2%)</li> </ul>
Ժամկետանց պարտավորությունների համար նախատեսված տուժանք	Ուշացման յուրաքանչյուր օրվա համար հաշվարկվում է տույժ՝ ժամկետանց գումարի և տոկոսի 0,13 տոկոսի չափով
Այլ պայմաններ	<p>1. Վարկառու կարող են լինել՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• ՀՀ քաղաքացի կամ ՀՀ քաղաքացիություն չունեցող անձ, ում ամուսինը հանդիսանում է ՀՀ քաղաքացի, և միևնույն ժամանակ նրանց գումարային տարիքը չի գերազանցում 70-ը</li> <li>• 18-35 (ներառյալ) տարեկան ՀՀ քաղաքացի և ռեզիդենտ, առնվազն մեկ երեխա ունեցող և ամուսին չունեցող միայնակ ծնողները</li> </ul> <p>2. Վարկառուի և համավարկառուի(առկայության դեպքում) ընդհանուր ամսական զուտ եկամուտը չպետք է գերազանցի 800'000 ՀՀ դրամը</p> <p>3. Եթե ամուսիններից որևէ մեկն ունի սեփականության իրավունքով իրեն պատկանող բնակելի անշարժ գույք, ապա այդ հասցեում հաշվառված անձանց 1 շնչի հաշվով բաժնեմասը չպետք է գերազանցի 18 քմ:</p> <p>4. Վարկ/գրավ գործակցի հաշվարկման ժամանակ պետք է հիմք ընդունել անշարժ գույքի ձեռքբերման և գնահատված արժեքներից նվազագույնը</p> <p>5. Կանխավճարի ապահովագրությունը կդադարի գործել այն պահից, երբ վարկ գրավ հարաբերակցությունը կկազմի 70 % երկրորդային շուկայից բնակարանի ձեռքբերման դեպքում և 80 %՝ առաջնային շուկայից(կառուցապատողից) բնակարանի ձեռքբերման դեպքում:</p>
Հնարավոր այլ ծախսեր	<ul style="list-style-type: none"> <li>• Նոտարական վավերացման հետ կապված ծախսեր(15'000-25'000 ՀՀ դրամ)</li> <li>• Անշարժ գույքի պետական կադաստրի հետ կապված ծախսեր (37'000-85'000 ՀՀ դրամ)</li> <li>• Գույքի գնահատում( 15'000-25'000 ՀՀ դրամ՝ կախված գույքի տեսակից)</li> </ul>

**Պայմանները գործում են մինչև 16.02.2021թ.**